

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

2013 թվականի մայիսի 30-ի թիվ 8 նիստի

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻՆ ԿԻՑ  
ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՊԱՀՈՎՈՂ  
ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ԵՊՀ կանոնադրության 30-րդ կետի 12-րդ և ԵՊՀ գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 12-րդ ենթակետերով Երևանի պետական համալսարանի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդին կից ձեռնարկությունների հետ համագործակցությունը ապահովող մշտական հանձնաժողովի աշխատակարգը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԵՊՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Ա. Հ. ՄԻՄՈՆՅԱՆ

## ԱՇԽԱՏԱԿԱՐԳ

### ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻՆ ԿԻՑ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՊԱՀՈՎՈՂ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

#### I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդին կից ձեռնարկությունների հետ համագործակցությունը ապահովող մշտական հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) գործունեության հիմնական նպատակն է բարձրացնել Երևանի պետական համալսարանի և Հայաստանի Հանրապետությունում ակտիվ գործունեություն ծավալող տարբեր ընկերությունների և կազմակերպությունների միջև համագործակցության արդյունավետությունը:

2. Հանձնաժողովը գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ԵՊՀ կանոնադրությանը, ԵՊՀ ներքին իրավական ակտերին և սույն աշխատակարգին համապատասխան:

3. Հանձնաժողովն իր ոլորտին վերաբերող հարցերը քննարկում է ԵՊՀ գիտական խորհրդի և/կամ ռեկտորի հանձնարարությամբ, ինչպես նաև հանձնաժողովի անդամների առաջարկությամբ:

4. Հանձնաժողովի գործունեության ժամկետի և կազմի հաստատումը, ինչպես նաև դրանց փոփոխություններն իրականացվում են ԵՊՀ գիտական խորհրդի կողմից:

#### I. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

5. Հանձնաժողովի գործառույթներն են.

1) ուսումնասիրել ԵՊՀ-ի և Հայաստանի Հանրապետությունում ակտիվ գործունեություն ծավալող պետական, մասնավոր և միջազգային ընկերությունների ու կազմակերպությունների (այսուհետ՝ ձեռնարկություններ) համագործակցությանն առնչվող հարցեր և ԵՊՀ գիտական խորհրդի ու ռեկտորատի քննարկմանը ներկայացնել համապատասխան առաջարկություններ, մշակել և իրականացնել համապատասխան ծրագրեր,

2) համակարգել ԵՊՀ տարբեր ստորաբաժանումների կողմից ձեռնարկությունների հետ տարվող աշխատանքը՝ ձևավորել համապատասխան միասնական տեղեկատվական դաշտ, ապահովել համապատասխան մեթոդական աջակցություն,

3) աջակցել ուսանողների կարիերայի խնդիրներին առնչվող և ձեռնարկատիրության զարգացմանն ուղղված ծրագրերի իրականացմանը,

4) նպաստել ԵՊՀ առանձին ստորաբաժանումների և ձեռնարկությունների համագործակցության կայացմանը, համակարգել ֆակուլտետներում գործող ձեռնարկությունների հետ համագործակցության խորհուրդների աշխատանքը,

5) իրականացնել ձեռնարկությունների հետ համագործակցության խնդիրների շուրջ տարվող աշխատանքների մշտադիտարկում և գնահատում:

### III. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

6. Հանձնաժողովն իր գործունեությունը կազմակերպում է նիստերի միջոցով, որոնք հրավիրվում են ըստ անհրաժեշտության: Հանձնաժողովի նիստերը հրավիրում է ԵՊՀ ռեկտորը, ով միաժամանակ հանձնաժողովի նախագահն է:

7. Հանձնաժողովի նիստերն իրավագոր են, եթե դրանց մասնակցում է հանձնաժողովի անդամների երկու երրորդը: Հանձնաժողովում որոշումներն ընդունվում են հանձնաժողովի նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում հանձնաժողովի նախագահն ունի վճռորոշ ձայնի իրավունք:

8. Հանձնաժողովի նախագահի բացակայության դեպքում նիստը վարում է նրա կողմից լիազորված հանձնաժողովի անդամը:

9. Հանձնաժողովի նիստերն անցկացվում են հանձնաժողովի նախագահի և հանձնաժողովի անդամների կողմից առաջարկվող օրակարգով: Հանձնաժողովի նիստերն արձանագրվում են:

10. Հանձնաժողովը մշակում և հաստատում է իր տարեկան գործունեության պլանը:

### IV. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԸ

11. Հանձնաժողովի նախագահը՝

1) հրավիրում և վարում է հանձնաժողովի նիստերը,

2) համակարգում է հանձնաժողովի որոշումների ընդունման գործընթացը,

3) առանձին հարցերի քննարկման նպատակով հրավիրում է համապատասխան մասնագետների և փորձագետների,

4) ԵՊՀ գիտական խորհրդում ներկայացնում է հանձնաժողովի կողմից մշակված նախագծերը,

5) իրականացնում է ԵՊՀ ներքին իրավական ակտերով և սույն աշխատակարգով նախատեսված այլ լիազորություններ:

### V. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄԸ

12. Հանձնաժողովի քարտուղարի պարտականությունները ի պաշտոնե կատարում է ԵՊՀ շրջանավարտների և կարիերայի կենտրոնի տնօրենը:

Հանձնաժողովի քարտուղարը՝

1) ապահովում է տեղեկատվության փոխանակումը հանձնաժողովի անդամների միջև, վարում է հանձնաժողովի նիստերի արձանագրությունները,

2) հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ ներհամալսարանական և արտահամալսարանական շրջանակներում ներկայացնում է հանձնաժողովի կողմից մշակված փաստաթղթերը և իրականացված աշխատանքները,

3) ունի հանձնաժողովի անդամին վերապահված իրավունքներն ու պարտականությունները:

13. Հանձնաժողովի անդամը՝

1) մասնակցում է հանձնաժողովում բարձրացված հարցերի քննարկմանը,

2) հանձնաժողովում անցկացված քննարկումների հիման վրա քվեարկությունների միջոցով մասնակցում է որոշումների ընդունմանը,

3) հանձնաժողովի որոշմամբ՝ ներհամալսարանական և արտահամալսարանական շրջանակներում ներկայացնում է հանձնաժողովի կողմից մշակված փաստաթղթերը և իրականացված աշխատանքները,

4) իրականացնում է ԵՊՀ ներքին իրավական ակտերով և սույն աշխատակարգով իրեն վերապահված այլ լիազորություններ:

15. Հանձնաժողովում քննարկված հարցերի վերաբերյալ հանձնաժողովի անդամը կարող է ունենալ հատուկ կարծիք և այն ներկայացնել ԵՊՀ գիտական խորհրդի նիստում: